ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 սեպտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

122
(2602)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 81

2021թ. մայիսի 21-ին ԱԳՆ մամուլի նախկին քարտուղար Աննա Նաղդալյանը լրագրողների հետ հարցուպատասխանի ընթացքում հայտարարել էր. «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանների սահմանագծման եւ հետագայում սահմանազատման գործընթացները պետք է մաս կազմեն հակամարտության համապարփակ խաղաղ կարգավորման գործընթացի, որի շրջանակներում առաջնային կերպով պետք է հասցեագրվեն Արցախի Հանրապետության տարածքների դեօկուպացիայի եւ Արցախի վերջնական իրավական կարգավիճակի որոշման հարցերը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության հովանու ներքո»: Այդ ժամանակ ԱԳ նախարարի պաշտոնը զբաղեցնում էր Արա Այվազյանը, որը հրաժարական տվեց այդ հայտարարությունից մոտ մեկ շաբաթ անց՝ մայիսի 27-ին: Արդեն նույն տարվա նոյեմբերի 18-ին՝ ԱԺ-ում կառավարության հետ հարցուպատասխանի ընթացքում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պատասխանելով ՔՊ-ական պատգամավոր Մարիա Կարապետյանի՝ կոմունիկացիաների ապաշրջափակման ուղղությամբ ՌԴ-Հայաստան-Ադրբեջան եռակողմ աշխատանքների մասին հարցին, հայտարարեց, որ սահմանազատման ու սահմանագծման եւ Արցախյան հիմնախնդրի կարգավորման հարցերը միմյանց հետ փոխկապակցված չեն, եւ դրանց ուղղությամբ տարբեր ճեւաչափերում են աշխատում: «Մենք հստակ արձանագրել ենք, որ մեզ համար երեք տարբեր հարցերն իրար հետ փոխկապակցված չեն՝ մասնավորապես՝ տարածաշրջանային կոմունիկացիաների բացում, սահմանների դեմարկացիա եւ դելիմիտացիա եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորում: Դրանք տարբեր հարցեր են, եւ այդ հարցերի քննարկման բովանդակությունն ու բանաձեւերը տարբեր են, ինչքան էլ մենք հասկանում ենք, որ դրանք իրար հետ առնչություն ունեն համատեքստի առումով»,-ասել էր Փաշինյանը: Ստացվում է՝ վարչապետն ԱԳՆ-ին ամբողջությամբ հակասող դիրքորոշում է հայտնել սահմանազատման եւ սահմանագծման գործընթացի ու Արցախյան հիմնախնդրի լուծման վերաբերյալ, հետեւաբար հերթական անգամ մանիպուլացրել է հասարակությանը:



Սեւանի ափամերձ հատվածներում կառուցված ապօրինի շենք-շինությունները քանդելու խոստում գրեթե բոլոր իշխանություններն են տալիս: Նմանատիպ խրոխտ ու բոցաշունչ ելույթ շրջակա միջավայրի նախկին նախարար, ներկայումս Պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռոմանոս Պետրոսյանն էր նաեւ ունենում դեռեւս 2020 թվականին՝ ասելով. «Թույլատրելի կառուցապատման նիշից ցածր հատվածներում կառուցված ապօրինի շենք-շինությունների ընդհանուր քանակն այս պահին շուրջ 3.800 հատ է»: Ըստ տրամաբանության՝ ապօրինի կառուցված ու մոտ 4 հազարի հասնող շենք-շինությունները հերթով, կարգով, շարքով պետք է ապամոնտաժվեին: Այդ առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը ՇՄ նախարարություն հարցում էր ուղարկել, թե 2 տարվա ընթացքում քանի շինություն է քանդվել: Մեր հարցմանն ի պատասխան՝ տեղեկացրել են, որ ապամոնտաժման աշխատանքներ են կատարվել 2021թ.-ին միայն: «2022-ին դեռեւս ապամոնտաժման աշխատանքներ չեն կատարվել: «Առաջնահերթությունը տրվել է ջրածածկման ենթակա անտառտնկարկների մաքրման աշխատանքներին»,- ասված է նախարարության՝ մեզ տրամադրված պատասխանում: 2021-ին ՇՄ նախարարությունը Սեւանա լճում 4 պարիսպ է քանդել, 9 վագոն-տնակ ու 5 շենք-շինություն ապամոնտաժել: Այս թվերը լավագույնս են խոսում իշխանության՝ Սեւանա լճի մասին տարբեր ժամանակներում արած վերամբարձ հայտարարությունների, այդ թվում՝ ապօրինի շինություններն ապամոնտաժելու մասին: Սեւանի մասին, ի դեպ, նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանն էր բարձրախոսում՝ ասելով. «Սեւանա լիճը պետք է դարձնել բարձրակարգ տուրիստական գոտի: Առաջին պայմաններից մեկը Սեւանն այդ ցանցային ցանկապատերից ազատելն է: Մեկ էլ գնում ես, ափով քայլում ես, տեսնում ես՝ չափար է դրված»: Հայտարարությունից ավելի քան երեք տարի անց, սակայն, տեսնում ենք, որ Սեւանա լճի ափամերձ հատվածների «չափարները» ոչ միայն չեն հանվել, այլեւ նոր «չափարներ» են ավելացել, որ պատսպարում են նորօրյա բիզնեսմենների՝ Սեւանի ափին կառուցվող առանձնատները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի դեմ հարուցված քրեական վարույթով մինչ նրան մեղադրանք առաջադրելը վկայի կարգավիճակով հարցաքննվել է նաեւ ԱԺ պատգամավոր, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սեյրան Օհանյանը հաստատեց տեղեկությունը՝ նշելով. «Իհարկե ինձ էլ են հարցաքննել, եւ ցանկանում եմ ասել, որ ես այստեղ՝ Շուշիում, եղել եմ կամավոր եւ իմ հնարավորության սահմաններում փորձել եմ օգնել, եւ դրա պատասխանատվությունը պետական կառավարման մարմինների եւ ռազմական կառավարման մարմինների վրա է»: Նշենք, որ Միքայել Արզումանյանին մեղադրանք է առաջադրվել Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում պաշտոնեական անփութություն կատարելու համար:

«Հայփոստ» ընկերությունը շարունակում է անհանգստություն պատճառել ՀՀ քաղաքացիներին: Ընկերության գործելաոճից տուժածներն անգամ դիմել են պետական կառույցներին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Հայփոստ» ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ է հարուցվել: Վարույթ հարուցող մարմինը Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն է: Մեզ հայտնի դարձավ, որ ՀՀ մի քանի քաղաքացիներ դիմել են հանձնաժողով եւ տեղեկացրել, որ «Հայփոստ»-ի դուստր ձեռնարկությունը՝ «Բեր-Բեր» ընկերությունը, իրենց փաթեթների ճակատագրերը մեկ ամիս է, ինչ օդից կախված է թողել: Քաղաքացիների պատմելով՝ նշված ընկերությունը օնլայն շոփինգի ոլորտում է դեռեւս 2021 թվականի նոյեմբերից, բայց այդ օրից ի վեր գրեթե ոչ մի փաթեթ չի առաքել ակնկալվող ամսաթվով: Մի շարք հաճախորդների կարծիքով էլ «Բեր-Բեր» -ը կորցրել է փաթեթները: Մեկ այլ քաղաքացու էլ ընկերության աշխատակիցները հայտնել են, որ հուլիսի 28-ի դրությամբ փաթեթը Լյուքսեմբուրգում է, այնինչ օրեր առաջ հավաստիացրել էին՝ ամենաուշը հուլիսի 28-ին փաթեթները մուտք կգործեն ՀՀ: Նշենք, որ «Բեր-Բեր»-ը ՀՀ օդային առաքման համար սահմանում է առավելագույնը տասն աշխատանքային օր, բայց «Բեր-Բեր»-ից տուժող տասնյակ անձինք մեկ ամիս է՝ չունեն ոչ մի հստակ ամսաթիվ, թե բեռները ՀՀ երբ մուտք կգործեն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ բողոքող քաղաքացիները նշել են, որ դեպքեր կան, երբ հաճախորդների՝ կցված բանկային քարտերից, առանց հաճախորդի թույլտվության, գանձել են գումար փաստացի չիրականացված ծառայությունների համար: Այս թեմայի շուրջ «Ժողովուրդ» -ը փորձեց մեկնաբանություն ստանալ ընկերությունից, սակայն մեր հեռախոսազանգերն անպատասխան մնացին:

ԱՌԱՆՑ ՀԱՅԱՆՊԱՍՏ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ

«ՓԱՇԻՆՅԱՆԸ 50 ԱՆԳԱՄ ԷԼ ԶԻՋԵԼՈՒ Է» Գ. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Երեկ՝ օգոստոսի 31-ին, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի նախաձեռնությամբ Բրյուսելում տեղի է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ Բրյուսելում հանդիպումը: Փակ դռների ետեւում մոտ չորս ժամ տեւած հանդիպման ավարտից հետո՝ եռակողմ հանդիպման ժամանակ, քննարկվել են գերիների ազատ արձակման եւ անհետ կորածների ճակատագրի պարզաբանման, սահմանազատման եւ սահմանային անվտանգության, տարածաշրջանային աղաշրջափակման, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման, Արցախյան հիմնախնդրին վերաբերող հարցեր:

Տարածված տեղեկությունների համաձայն՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել արտգործնախարարների մակարդակով շարունակել «առարկայական բանակցությունները խաղաղության պայմանագրի նախագծի մշակման շուրջ», եւ որ նախարարներ Արարատ Միրզոյանն ու Ջեյհուն Բայրամովը կհանդիպեն մեկ ամսվա ընթացքում:

Եռակողմ հանդիպման թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է քաղաքագետ Գագիկ Համբարյանի հետ:

-Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարներ Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիեւը երեկ հերթական հանդիպումն են անցկացրել: Հայանպաստ որեւէ դիրքորոշում տեսնո՞ւմ եք տարածված հաղորդագրության մեջ:

-Ես բազմիցս եմ նշել եւ փաստացի ապացուցել եմ, որ հայանպաստ որոշում չի կարող ընդունվել Ալիեւ-«Նիկոլ Անհող» հանդիպման ժամանակ: Խնդիրը նախեւառաջ այն է, որ կապիտուլյանտ Նիկոլը ներկայացնում է պարտված իշխանություն, եւ պարտությունը կրել է հենց ինքը: Ալիեւի դեմ ծնկած հողատու Նիկոլը չի կարող հավասարը հավասարին բանակցել պաշտոնական Բաքվի որեւէ ներկայացուցչի հետ, էլ չեմ ասում՝ Իլհամ Ալիեւի հետ: Նա ադրբեջանցիների մոտ ընկալվում է որպես պարտված ղեկավար, ու աշխարհում չի եղել դեպք, որ պարտված ղեկավարը կարողանա հավասարը հավասարին բանակցել: Նոյեմբերի 9-ից հետո ասել եմ սրա մասին, ու սա նաեւ հետագա գործընթացները ապացուցեցին ու շարունակում են ապացուցել: Նիկոլ Փաշինյանն էլ ավելի մեծ արհավիրքներ է բերելու Հայաստանի Հանրապետության գլխին, ու նա ոչ մի պարագայում չի հրաժարվելու իշխանությունից եւ այն պահելու համար նորանոր զիջումների է գնալու: Այս ամենից օգտվում են բոլորը՝եւ մեր թշնամիները, եւ մեր «բարեկամները»՝ Ռուսաստանը, Եվրամիությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, որոնք, այս պահին աշխարհում տեղի ունեցող բարդ գործընթացներով պայմանավորված, փորձում են իրենց դիրքերն էլ ավելի ամրապնդել: Եվ այս բոլոր երկրների համար ընդունելի են այն բոլոր զիջումները, որ անում է Նիկոլը: Եվ դա այն պատճառով, որ, Ուկրաինային զուգահեռ, երկրորդ ճակատ չբացվի:

-Սա երկու երկրների ղեկավարների 5-րդ հանդիպումն է: Ձեր գնահատմամբ՝ ի՞նչ են տվել այդ հանդիպումները:

-Եթե անգամ 50 անգամ էլ հանդիպեն, ապա Նիկոլ Փաշինյանը 50 անգամ էլ զիջելու է: Այստեղ խնդիրը այն է, որ նա զիջումների գնացել ու շարունակում է գնալ բանավոր համաձայնությունների եւ բացահայտ շանտաժների միջոցով: Նիկոլ Փաշինյանը կարող է իր պողպատյա մանդատը օգտագործել ընդդիմադիրներին ճնշելով, ֆեյքաբուծարան պահելով, ընդդիմադիրներին վարկաբեկելով, հպարտանալով, որ ինքը ժողովրդի վարչապետն է, բայց, ցավոք, չի կարող այն միջազգային հարթակներում բանակցությունների ժամանակ ու հատկապես Ալիեւի հետ խոսելիս կիրառել: Այս իրավիճակից միակ ելքն իշխանության գոնե ինչ-որ չափով փոփոխությունը, ավելի կոնկրետ՝ Նիկոլ Փաշինյանի հեռացումն է:

-Ի՞նչ նոր «անակնկալներ» սպասել երկու երկրների ղեկավարների՝ առաջիկայում կազմակերպվելիք հանդիպումներից:

-Անակնկալները միշտ են լինելու, հիմա գալու է բանավոր փուլի պայմանավորվածությունների ժամանակահատվածը: Նիկոլ Փաշինյանը, չի բացառվում, որ համաձայնելու է ադրբեջանցիներին տալ Տիգրանաշենն ու այլ տարածքներ: Չի բացառվում նաեւ, որ բանավոր համաձայնությունների հետեւանքով ադրբեջանցիները մուտք գործեն Հայաստան եւ տեղակայվեն մեր տարածքներում: Կարծում եմ՝ մենք ավելի մեծ կորուստներ ենք ունենալու, ցավոք՝ այս անգամ գուցե պետականության կորուստ: Եվ քանի դեռ Նիկոլը կա, պետք չէ լավ բաների ակնկալիք ունենալ: Միշտ կորուստներ ենք ունենալու՝ տարածքային, բարոյական, արտաքին քաղաքականության մեջ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԳԵԼՈՂ ՆԱԽԱԳԻԾ

Երեկ խորհրդարանում տեղի էր ունեցել ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նիստը, որը կազմակերպել էր քննարկում՝հրավառություններն արգելող նախագծի շուրջ: Նիստին մասնակցում էր նաեւ ՀՀ նախկին փոխվարչապետ Տիգրան Ավինյանը: Ավինյանը պարզաբանեց, որ օրենքի ընդունմամբ այդ բիզնեսը ոչ թե վերանալու է, այլ կանոնակարգվելու ու վերահսկվելու, հրավառություններն էլ թույլատրվելու են միայն կոնկրետ միջոցառումների ժամանակ:

«Այդտեղ շատ կոնկրետ դետալներ կան, որ պետք է քննարկել, մասնավորապես՝ հրավառության որ տեսակներն են թույլատրելի, որոնք՝ չէ: Որովհետեւ կան տեսակներ, որոնք իրոք անձայն են, ավտանգ են»,- ասաց նա: Տիգրան Ավինյանը մեկնաբանեց «Սուրմալու» առեւտրի կենտրոն այցելելուց հետո իր հասցեին հնչող քննադատությունները:

«Այո՛, դա քարոզարշավ անելու տեղ չէր: Եվ բացարձակապես նման ցանկություն եւ միտում չկար այդ ամենի մեջ»,- ասաց Ավինյանը՝ հարցի քաղաքականացման մեջ մեղադրելով որոշ լրատվամիջոցների:

ՈՒՂԵՐՉ Է ՀՂԵԼ

Երեկ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ծննդյան օրն էր: Ու երբ Քոչարյանը կալանավայրում էր, ավանդաբար այդ օրը Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհավորում էր նրան ծննդյան առիթով: ArmLur.am-ը կապ հաստատեց երկրորդ նախագահի գրասենյակի պատասխանատու Բագրատ Միկոյանի հետ՝ պարզելու՝ արդյոք Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը երեկ շնորհավորել է Ռոբերտ Քոչարյանին ծննդյան առթիվ: Ի պատասխան՝ Միկոյանն ասաց. «Այո, այս տարի եւս նախագահ Քոչարյանը ծննդյան օրվա կապակցությամբ շնորհավորական ուղերձ է ստացել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինից»:

Այս փաստը ուշագրավ է այնքանով, որ նախորդ տարի, որ հետընտրական էր Հայաստանում, եւ Քոչարյանին չհաջողվեց իշխանության գալ, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը չէր շնորհավորել, ասել է թե՝ մոռացել էր Քոչարյանի ծննդյան առիթը արժեւորել: Այս անտարբերությունը քաղաքական հեռուն գնացող վերլուծությունների առիթ էր դարձել: Անգամ խոսվեց, թե Քոչարյանն այլեւս չի վայելում Մոսկվայի վստահությունը: Սակայն այս տարի ավանդույթը վերականգնվել է մեր ռազմավարական միակ դաշնակից պետության ղեկավարի կողմից, եւ շնորհավորական ուղերձը Մոսկվայից Երեւան է հասել: Ի՞նչ է նշանակում այս քայլը՝ընկերական ժե՞ստ, թե՞ քաղաքական ակնարկ: Թերեւս ժամանակը ցույց կտա:

ՏԱՐՕՐԻՆԱԿ

ԱՄՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԻՍՏԵՐԻԱՆ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը օգոստոսի 25-ին թվիթերյան իր էջում հայտնել է, որ դեսպան Ֆիլիպ Ռիքերին նշանակել է կովկասյան բանակցությունների հարցերով խորհրդականի եւ Մինսկի խմբի համանախագահի պաշտոնում: Վերջինս 2019-2021 թվականներին եղել է ԱՄՆ պետդեպարտամենտի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով բյուրոյում պետքարտուղարի օգնականի պաշտոնակատար: Ստացվում է՝ մեր տարածաշրջանով զբաղվող գլխավոր դիվանագետներից է եղել Միացյալ Նահանգների արտաքին գերատեսչությունում:

Ռիքերը Մինսկի խմբի առաջին ամերիկացի համանախագահն է, որը ներկայացնելու է Միացյալ Նահանգները նաեւ Վրաստանի հակամարտությունների շուրջ Ժնեւի միջազգային քննարկումներում: 2021 թվականի հունիսի 12-ին Ռիքերի միջնորդությամբ տեղի էր ունեցել 15 հայ գերու փոխանակում Աղդամի շրջանի ականապատման քարտեզների դիմաց:

Ֆիլիպ Ռիքերի նշանակումը Մինսկի խմբի համանախագահի պաշտոնում արժանացավ տարօրինակ արձագանքի Բաքվի կողմից: Ադրբեջանի արտգործնախարարության խոսնակ Լեյլա Աբդուլաեւան թվիթերյան իր էջում գրառում է արել՝ քննադատելով Ռիքերի նշանակումը: Աբդուլաեւան, մասնավորապես, նշել է, որ գրեթե չգործող Մինսկի խումբը «վերակենդանացնելու փորձերը» կարող են հանգեցնել հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացից ԱՄՆ-ի հեռացման: Նա հավելել է, որ Ղարաբաղյան հակամարտությունը լուծված է, Ղարաբաղն էլ Ադրբեջանի անքակտելի մասն է:

Ադրբեջանի նախագահի արտաքին հարաբերությունների գծով օգնական Հիքմեթ Հաջիեւը եւս քննադատությամբ է հանդես եկել:

Օգոստոսի 27-ին ելույթ ունենալով Շուշի քաղաքում կազմակերպված հերթական համաժողովում՝ Հաջիեւը նշել է, որ 30 տարվա անգործությունից հետո ինչ-որ մեկին Մինսկի խմբի համանախագահ նշանակելը ամոթալի քայլ է: Նա հավելել է. «Բայց կա երկու երկիր, որոնք չեն մասնակցում այս միջոցառմանը. դրանք են ԱՄՆ-ն եւ Ֆրանսիան: Նրանց բացակայության պատճառը հասկանալ չենք կարող... Հետագայում նրանց այլեւս չենք հրավիրի... Նրանց բացակայությունը, Մինսկի խմբի վերականգնման եւ վերակենդանացման մասին հայտարարությունները եւս մեկ անգամ ցույց են տալիս, թե ինչ առաքելություն են իրականացրել 30-ամյա բանակցային գործընթացի շրջանակներում»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

Armlur.am-ին երեկ մանրամասներ են հայտնի դարձել Արմավիր-Երեւան ճանապարհին սեփական մեքենայի մեջ ինքնասպան եղած տղամարդու դեպքից: Դեպքից հետո իրավապահները վերջինիս հարազատներին են հարցաքննել: Մեզ հասած լուրերի համաձայն՝ մահացածի կինը եւ հայրը հայտնել են, որ ունեցել է մեծ պարտքեր, ու միգուցե դա է պատճառը, որ գնացել է այդ քայլին:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Արմավիրի մարզի ճանապարհին՝ մեքենայի մեջ ինքնասպան եղած անձը Որսորդմիության անդամ էր եւ մասնակցել էր 44-օրյա պատերազմին:

Ի դեպ, զենքը, որով նա ինքնասպան է եղել մեքենայի մեջ, պատկանել է իրեն: Իսկ թե ինչու է նա գնացել այդ քայլին, դեռեւս պարզ չէ:

Հիշեցնենք, որ ըստ Shamshyan.com-ի՝ օգոստոսի 30-ին հրազենի գործադրմամբ ինքնասպանություն է տեղի ունեցել Արմավիրի մարզում: Ժամը 16:10-ի սահմաններում ոստիկանության Վաղարշապատի բաժին ահազանգ է ստացվել, որ Երեւան-Արմավիր ավտոճանապարհի 20-րդ կմ հատվածում՝ ժողովրդին հայտնի «Ինքնաթիռի թեւեր» կոչվող հատվածում, ինքնասպանություն է տեղի ունեցել:

Ոստիկանները Երեւան-Արմավիր ավտոճանապարհի նշված կիլոմետրի ճախակողմյան հատվածում հայտնաբերել են BMW մակնիշի ավտոմեքենան, որի մեջ վարորդի կողքի առջեւի նստատեղին հայտնաբերվել է տղամարդու դի՝ հրազենային վնասվածքով:

ՄԱՀԱՑԵԼ Է ԱՎՏՈՎԹԱՐԻՑ

Երեւանում ավտովթարից զոհվել է «Ինտերնյուս»-ի նախկին գլխավոր տնօրեն Մանանա Ասլամազյանը: Ասլամազյանը մահացել է հիվանդանոցում: Նրան Տեսլայով վրաերթի է ենթարկել 25-ամյա վարորդը: Նույն օրը 25-ամյա երիտասարդը, որը ավտոմեքենան վարել է՝ չունենալով համապատասխան կարգի վարորդական իրավունքի վկայական, ձերբակալվել է:

Մանանա Ասլամազյանը Ռուսական հեռուստատեսության ակադեմիայի անդամ էր: 2000 թվականից Ռուսաստանի Դաշնության ֆեդերալ մրցակցային հանձնաժողովի անդամ էր՝ մամուլի, հեռուստառադիոհեռարձակման եւ զանգվածային լրատվության միջոցների գործերով: Հանձնաժողովի կազմից հեռացվել է 2004 թվականին Վլադիմիր Պոզների հետ միասին: 2002 թվականին դարձել էր «Ռուսաստանի մեդիամենեջեր» մրցանակի դափնեկիր՝ «Մեդիաբիզնեսի զարգացման գործում հատուկ ծառայություն» անվանակարգում:

«Կրթված լրատվամիջոցներ» ֆոնդի նախկին ղեկավարն է: Մանանա Ասլամազյանը Ռուսական հեռուստատեսության ակադեմիայի կողմից շրջանների հեռուստատեսության համար կադրեր նախապատրաստելու կարեւոր դերի համար արժանացել էր հատուկ մրցանակի՝ «Ռուսական հեռուստատեսության զարգացման գործում անձնական ներդրման համար» վերտառությամբ: Հարկադրված վտարանդիության մեջ ապրել է Ֆրանսիայում: Վերջին շրջանում ապրում եւ աշխատում էր Հայաստանում: ArmLur.am-ի եւ «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրակազմը ցավակցություն է հայտնում Մանանա Ասլամազյանի ընտանիքի անդամներին եւ հարազատներին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԸՆԹԱՑ ԵՆ ԳՐԱՆՑԵԼ

Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի ներկայացուցիչներից բաղկացած եռակողմ աշխատանքային խումբը զգալի առաջընթաց է գրանցել Հարավային Կովկասում տրանսպորտային կապերի ապաշրջափակման խնդրի շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերման հարցում:

Այդ մասին չորեքշաբթի հայտարարել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովն իրանցի գործընկեր Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ բանակցություններից հետո կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:

«Հարավային Կովկասում առեւտրատնտեսական եւ տրանսպորտային կապերի ապաշրջափակման հարցերով զբաղվում է եռակողմ խումբը՝ Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի փոխվարչապետերի մասնակցությամբ: Այն աշխատում է ռիթմիկ, համաժամանակ. ի դեպ, Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ սահմանազատման վերաբերյալ հանդիպումների առնչությամբ հենց օրերս տեղի ունեցան կանոնավոր շփումներ: Այս եռակողմ աշխատանքային խումբը, որը ստեղծվել է երեք նախագահների՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ, զգալի առաջընթաց է գրանցել պայմանավորվածությունների ձեռքբերման հարցում: Հուսով եմ՝ դրանք կձեւակերպվեն շատ մոտ ապագայում: Ամենակարեւորն այն է, որ այս աշխատանքն իրականացվում է ոչ թե վակուումում, ոչ մեկուսացված, այլ ավելի լայն տրանսպորտային նախագծերի, այդ թվում՝ Հյուսիս-Հարավ միջանցքի նախագծի հետ սերտ համատեղությամբ, որով շահագրգռված են նաեւ մեր իրանցի գործընկերները»,- ասել է Լավրովը:

Լավրովի խոսքով՝ քննարկումը վերաբերել է Ադրբեջանի, Իրանի եւ Ռուսաստանի միջեւ Ռեշտ-Աստարա մայրուղու փոքր երկաթուղային հատվածի վերականգնման շուրջ ընթացող քննարկումներին:

Իր հերթին Աբդոլլահիանը նշել է, որ Իրանն ունի շատ արտոնյալ աշխարհաքաղաքական դիրք:

«Տրանզիտային ուղիների ամրապնդումը, այդ թվում՝ Հյուսիս-Հարավ դիվերսիֆիկացված գծերը, ընկալում ենք որպես այս տարածաշրջանի զարգացման, ինչպես նաեւ պարենային անվտանգության կարեւոր գործոն»,- հավելել է նա:

Իրանի ԱԳ նախարարը նաեւ հայտնել է երկրի պատրաստակամությունը՝ ավարտին հասցնելու Ռեշտ-Աստարա անավարտ հատվածի շինարարությունը:

Նշենք, որ աշխատանքային խումբը, որը գլխավորում են Հայաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետերը, հերթական անգամ հանդիպել էին երեքշաբթի: «Ժողովուրդ» օրաթերթը իր երեկվա համարում գրել էր որ նրանք արդեն պայմանավորվածություն ունեն հաջորդ հանդիպման մասին, եւ դա տեղի կունենա Բրյուսելում մեկ շաբաթվա ընթացքում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՃ

Իրանից արտահանումը Հայաստան ընթացիկ տարվա 4 ամսում (2022թ. մարտի կեսերից հուլիսի կեսեր) կազմել է մոտ 115 միլիոն դոլար, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 20%-ով: Այս մասին ասել է Իրանի առեւտրի զարգացման կազմակերպության Կենտրոնական Ասիայի, Կովկասի եւ Ռուսաստանի գլխավոր տնօրեն Ռահմաթոլլահ Խարմալին:

Նա ընդգծել է, որ Հայաստանը իրանական ապրանքների համար մուտքի դարպաս է ԵԱՏՄ շուկա: Իրանից Հայաստան են արտահանվում այնպիսի ապրանքներ, ինչպես ամրաններ, բիտում, պողպատ, սննդամթերք, նավթաքիմիական արտադրանք, շինարարական ապրանքներ:

Խարմալին հավելել է, որ Հայաստանում առաջիկա ամիսներին շահագործման կհանձնվի 2 հա տարածք զբաղեցնող Իրանի առեւտրի կենտրոնը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԵՆ



Երեւանում տրանսպորտային հոսքերի անցանելիությունն ավելացնելու նպատակով ս.թ սեպտեմբերի 3-ից երթեւեկության կազմակերպման փոփոխություն կկատարվի Ծովակալ Իսակովի պողոտայում՝ ՀՀ ոստիկանության ներքին զորքերի զորամասի հարակից ճանապարհահատվածում: Քաղաքապետարանից հայտնում են, որ, մասնավորապես, հետադարձի համար նախատեսված երթեւեկելի գոտին կփոխարինվի ուղիղ երթեւեկությամբ գոտիով: Միաժամանակ ճանապարհահատվածում կտեղադրվեն համապատասխան ճանապարհային նշաններ:

ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հրամանով՝ օգոստոսի 25-ին պաշտոնից ազատվել է «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանի տնօրեն Կորյուն Եղիազարյանը: Այս մասին հայտնել է Պաշտպանության նախարարության մամուլի քարտուղար Արամ Թորոսյանը: Եղիազարյանը պաշտոնից ազատվել է՝ իր դիմումի համաձայն, երկարամյա կենսաթոշակի հիմքով:

ԱՋԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

ԿԱՍԿԱԾԵԼԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Միխայել Արզումանյանի պաշտպան Երեմ Սարգսյանը ArmLur.am-ի հետ զրույցում հայտնեց, որ այն պնդումները, թե Միխայել Արզումանյանին ծանուցում են ուղարկել, որ նա ներկայանա, իրականությանը չի համապատասխանում.

«Օգոստոսի 30-ին՝ ժամը 15:45-ին, Արցախ-Երեւան ճանապարհին հատուկ ստորաբաժանումներով Միքայել Արզումանյանին ներկայացրել են քննչական բաժին: Որոշման մեջ նշված է, թե, իբր, օգոստոսի 25-ին հրավիրել են ծանուցումով՝ հարցաքննության, այնինչ որեւէ ծանուցագիր չի հանձնվել: Այսինքն՝ այն հիմքը, որ նշվել է հարկադրաբար ներկայացնելու որոշման մեջ, իրականում գոյություն չունի: Այս ամենից հետո նրան մեղադրանք է առաջադրվել, որից հետո անհիմն ձերբակալության որոշում է կայացվել՝ այն հիմքով, թե դատարան ներկայացնելու համար կալանավորում են, բայց իրականում ձեւական առումով ձերբակալում եղավ, քանի որ այդ պահին ձերակալման որեւէ հիմք չկար, իսկ միայն դատարան ներկայացնելու անհրաժեշտությունը բավարար չէ: Այսինքն՝ պետք է նաեւ այլ հիմնավորումներ ներկայացվեին»:

Ըստ պաշտպանի՝ գիշերը՝ 23:00-ի սահմաններում, միջնորդություն են ներկայացրել դատարան կալանքի թույլտվություն ստանալու համար եւ ներկայացրել են 50 թերթից բաղկացած միջնորդություն եւ 3 հատոր գործի նյութեր, որոնք խիստ ծավալուն են. «Առավոտյան՝ ժամը 12:10-ի սահմաններում, նիստը սկսվել է եւ տեւել է մոտ 20 րոպե, եւ այդ ընթացքում Միքայել Արզումանյանը գտնվել է անազատության մեջ, եւ դա այն դեպքում, որ նա պետք է 11:45 -ին ազատ արձակված լիներ, այսինքն՝ նրան ապօրինի պահել են անազատության մեջ:

Այս ամենից հետո նիստը սկսվեց, եւ հայտնեցին, թե բոլոր նյութերին ծանոթացել եք, եւ ես հայտնեցի, որ այս ժամկետի մեջ անհնար է այդ աստիճան նյութերին հասցնենք ծանոթանալ, եւ խնդրել ենք ողջամիտ մեկ օր ժամանակ ծանոթանալու եւ վստահորդիս հետ քննարկելու համար: Դատարանը գտավ, որ մեկ ժամը բավարար է, ես պահանջեցի, որ ազատ արձակեն, քանի որ ժամկետը անազատության մեջ գտնվելու լրացել է, սակայն ոչինչ չարվեց: Ընդմիջում հայտարարվեց, որից հետո դատարանը գտավ, որ պետք է հրատապ նիստ նշանակի, եւ հայտարարեց, որ պարզել է՝ ժամկետը լրացել է, եւ հայտարարեց, որ Միքայել Արզումանյանը ազատ է»:

Պաշտպան Երեմ Սարգսյանի խոսքով՝ ինքը դատարանում տեւական ժամանակ բարձրացրել է իր վստահորդի՝ անազատության մեջ ապօրինի պահվելու հարցը, ժամկետ տրամադրելու հարցը, սակայն կասկածելի կերպով դատավորը ընդմիջում է վերցնում եւ դրանից հետո վերադառնում է եւ որոշում, թե, այո, անձը պետք է ազատ արձակվի: Պաշտպանը դատարանում հարց է բարձրացրել, թե ով պետք է պատասխանատվություն կրի նրա համար, որ Միքայել Արզումանյանը մի քանի ժամ ապօրինի անազատության մեջ է գտվել, եւ դեռ ավելին՝ ի՞նչ փոխվեց դատավորի մոտ, որ նա մինչ այդ մերժում էր մեր միջնորդությունները նյութերին ծանոթանալու համար մեկ օր ժամանակ տրամադրել, սակայն մի փոքր ուշ միգուցե ճշտումներ արեց եւ հասկացավ, որ գործով խախտումներ կան. գործի նյութերին ծանոթանալու համար ժպամանակ է պետք: Սարգսյանի պնդմամբ՝ դատավորը որեւէ հարցի չի պատասխանել: Սարգսյանի խոսքով՝ այս ամեն ինչից ակնհայտ է, որ որոշումը արդեն կայացված է դատավորի մոտ կամ միգուցե այլ տեղ, բայց դատավորի կնիքը կդրվի. «Դատավորը փորձեց իր խախտումը վերացնել եւ արդեն կայացնել ընդունված որոշումը, քանի որ այն դատավորը, որը նման հնչեղ գործով ի վիճակի չէ տարրական իրավունքները ապահովել՝ անձի ազատության իրավունքը, անձի պաշտպանության իրավունքը, եւ միայն ընդմիջումներից հետո՝ այլ վայրերում քննարկելուց հետո, ժամկետը լրացած անձին ասում է, որ դու հիմա ազատ ես, նշանակում է, որ նա ինքնուրույն որոշում չի կարող կայացնել եւ չի կայացնելու, հետեւաբար ելքը որոշված է»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԵԽԱՆ ՄԱՀԱՑԵԼ Է

Օգոստոսի 30-ին ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Վայոց ձորի մարզում: Ժամը 20:30-ի սահմաններում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան Գետափ-Մարտունի ավտոճանապարհի 21-րդ կմ հատվածում՝ Աղնջաձոր համայնքի վարչական տարածքում, դուրս է եկել երթեւեկելի գոտուց, մոտ 25 մետր մի քանի պտույտ գլորվելով՝ գլխիվայր հայտնվել ձորակում:

Վթարի հետեւանքով 6 հոգի, որից 2-ը երեխաներ են, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Եղեգնաձոր» բժշկական կենտրոն: Մինչ վթարի վայրում քննչական խումբն աշխատել է, «Եղեգնաձոր» բժշկական կենտրոնից ոստիկանության Եղեգնաձորի բաժին ահազանգ է ստացվել, որ վիրավորներից 3 ամսական տղան, գիտակցության չգալով, մահացել է:

Վթարի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ, հարուցվել է քրեական գործ: Ոստիկանությունն ու քննչական վարչությունը պարզում են վարորդի, մահացածի եւ վիրավորների ինքնությունը: Վիրավորներն ու մահացածը ընտանիքի անդամներ են՝ հայրը, մայրը, նրանց երեխաներն ու ազգականները:

Քննիչի հանձնարարականով՝ ավտոմեքենան տեղափոխվել է ոստիկանության Եղեգնաձորի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Երեւանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության՝ Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանից եւ նրան փոխկապակցված 5 անձանցից շուրջ 19.1 մլրդ դրամ արժեքով գույքերն ու ակտիվները բռնագանձելու հայցադիմումը:

Դատախազության հաղորդագրության համաձայն՝ այս տարվա հուլիսի 27-ին ներկայացված հայցադիմումով դատարանին պահանջ է ներկայացվել հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

օ 5 անշարժ գույքեր՝ Երեւան քաղաքում գտնվող առանձնատուն (երկու հասցեով), բնակարան, հասարակական նշանակության օբյեկտ, Գորիս քաղաքում գտնվող շինություն, 3 տրանսպորտային միջոցներ, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց միջին շուկայական արժեքները, որն ընդհանուր կազմում է ավելի քան 1 միլիարդ 530 միլիոն 135 հազար 900 ՀՀ դրամ,

օ մասնակցություններ՝ թվով 3 իրավաբանական անձերում,

օ 614 միլիոն 544 հազար 139 ՀՀ դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ,

օ 2 միլիարդ 410 միլիոն 463 հազար 523 ՀՀ դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում եւ հնարավոր չէ բռնագանձել՝ հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը,

օ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց տրամադրված ընդհանուր 4 միլիարդ 450 միլիոն 350 հազար 364 ՀՀ դրամ փոխառությունների եւ այլ դեբիտորական պարտքերի պահանջի իրավունքը,

օ օֆշորային կազմակերպությանը փոխանցված 10 միլիարդ 98 միլիոն 300 հազար ՀՀ դրամ ներդրման գումարը:

Վերոնշյալը դատարանի կողմից վարույթ ընդունված 13-րդ նման հայցադիմումն է. նշված է հաղորդագրությունում:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՅԹՅՈՒՆ

ArmLur.am-ը գրել էր, որ երեկ ոստիկանությունում ահազանգ է ստացվել, որ ժամը 5.00-ին ԱԻՆ 911 ծառայությունից ոստիկանություն ահազանգ է ստացվել, եւ իրենց զանգած քաղաքացին հայտնել է, որ Կոմիտասի պողոտայի եւ Փափազյան փողոցի խաչմերուկից պայթյունի ձայն է լսվել: Նշված վայրի եւ Փափազյան փողոցի խաչմերուկից պայթյունի ձայն է լսվել: Նշված վայր մեկնած օպերատիվ խմբին մի քաղաքացի հաղորդում է տվել, որ ժամը 4.20-ի սահմաններում լսել են պայթյունի նմանվող ձայն, ինչից հետո նկատել են, որ վնասվել է Ն. Զարյան փողոցի իր խանութ-յուղման կետի դռան ապակին:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ պայթյունը տեղի է ունեցել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հոր խանութում: Արդյոք պայթյունը կազմակերպված է եղել, թե դժբախտ պատարաի հետեւանք է, իրավապահները դեռ չեն մանրամասնում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ անձամբ պատգամավորի հայրը՝ Զարեհ Սարգսյանն է ահազանգել ոստիկանություն:

ArmLur.am-ը խոսեց Զարեհ Սարգսյանի հետ, որը մեզ հետ զրույցում նշեց, որ այդ տարածքը իրենը չէ, պայթյունը եղել է հարակից տարածքում:

Նշենք, որ shamshyan.com-ը նույնպես գրել էր, որ պայթյունը եղել է պատգամավորի հորը պատկանող խանութում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՃ

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2022թ. հունվար-հունիսին (հուլիսինը դեռ չի հրապարակվել) անվանական աշխատավարձի աճի տեմպը շարունակել է բարձր մնալ, սակայն ընդգծված գնաճի պայմաններում իրական աշխատավարձի աճը մնացել է ցածր մակարդակում:

ArmLur.am-ը հիշեցնում է, որ ՀՀ տնտեսությունում միջին ամսական անվանական աշխատավարձը հունվար-հունիս ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 11.3%-ով եւ կազմել 218,641.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը, աճելով 4.5%-ով, կազմել է 175,920.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում այն աճել է 13.2%-ով եւ կազմել 237,705.0 դրամ: Սակայն հաշվի առնելով, որ 2022թ. հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, սպառողական գների ինդեքսը 8.1% է, կարող ենք ընդգծել, որ իրական աշխատավարձն աճել է ընդամենը 3.0%-ով: Ինչ վերաբերում է պետական հատվածին, այդտեղ իրական աշխատավարձը բավական նվազել է, ինչը միանշանակ վկայում է այդ հատվածի աշխատողների միջին կենսամակարդակի անկման մասին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 30-ից 31-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 25-ին կկայանան Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ: Այդ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուների 58-հոգանոց ցուցակի առաջին համարը Բերդի միասնական սոցիալական ծառայության տնօրեն Վահրամ Սուքիասյանն է: «Արդարություն» կուսակցության եւ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ստեղծած դաշինքի՝ «Արժանապատիվ սերունդի» 27 թեկնածուների ցանկը գլխավորում է Աշոտ Մելիքյանը, որը «Գազպրոմ Արմենիա» ընկերության հերթափոխի պետն է, նախկինում Բերդում գործող ձեռնոցների գործարանի հերթափոխի պետ է եղել: «Իմ հզոր համայնք» եւ Վահան Բաբայանի Ռեֆորմիստների կուսակցությունների կազմած դաշինքը ներկայացել է «Զորավոր համայնք» անվանումով, որի 62-հոգանոց նախընտրական ցուցակի առաջին համարը Հարություն Մանուչարյանն է: Այսպիսով, Բերդ խոշորացված համայնքի ավագանու 21 տեղի համար գրանցված է 147 թեկնածու: Ավագանու յուրաքանչյուր թեկնածուի համար մուծված է 500 հազար դրամ ընտրական գրավ: Տավուշի մարզի թիվ 38 տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Աիդա Սարգսյանը մեր հետ զրույցում հայտնեց, որ ներկայումս տարածքային հանձնաժողովն ավագանու թեկնածուներից ստանում եւ ԿԸՀ ինտերնետային կայք է մուտքագրում թեկնածուների ներկայացրած հայտարարագրերը: Սեպտեմբերի 5-ից կսկսվի եւ սեպտեմբերի 24-ին կավարտվի նախընտրական քարոզարշավը:

ՍՏԵՂԾԵԼ Է ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը օգոստոսի 12-ին որոշում է ընդունել ստեղծել Իջեւան համայնքի վարչական տարածքում փայտածուխ արտադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու նպատակով աշխատանքային խումբ, որի ղեկավար, Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ Արկադի Ամիրխանյանին հանձնարարել է Իջեւան համայնքի վարչական տարածքում փայտածուխ արտադրող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց գործունեության նկատմամբ 20 օրվա ընթացքում իրականացնել մշտադիտարկում եւ արդյունքների մասին մարզպետին տեղեկանք ներկայացնել: 2019թ. մայիսի 29-ին, Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանի որոշմամբ, ստեղծվել էր մարզի Ազատամուտ գյուղում փայտածուխի արտադրամասերի գործունեությունը եւ շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունն ուսումնասիրող հանձնաժողով: Հանձնաժողովը մի շաբաթ ուսումնասիրություններ էր կատարել Ազատամուտում փայտածուխի արտադրամասերի գործունեության, շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության, հետեւանքների ու ռիսկերի վերաբերյալ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՒՂԱՐԿԵԼ Է

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը, խախտելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված ուժի կիրառման եւ դրա կիրառման սպառնալիքի արգելքի հիմնարար սկզբունքը, Արցախի (Լեռնային Ղարաբաղ) էթնիկ հայկական բնակչության նկատմամբ սանձազերծեց ագրեսիվ ռազմական մարդու հիմնարար իրավունքների եւ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարմամբ: Ադրբեջանական ագրեսիան միջազգային հանրության կողմից չդատապարտվեց, եւ ոգեւորվելով անպատժելիությունից՝ Ադրբեջանի իշխանությունները ուժի եւ դրա սպառնալիքի կիրառումը սկսեցին եւ մինչեւ օրս շարունակում են օգտագործել որպես Արցախի ժողովրդի նկատմամբ բռնաճնշումների իրականացումը եւ Արցախի տարածքի նկատմամբ ունեցած նկրտումները սպասարկող կարեւորագույն գործիք:

2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ սահմանված հրադադարի ռեժիմն Ադրբեջանը բազմիցս խախտում է՝ դիմելով տարբեր բնույթի սադրանքների: Խախտումները իրականացվում են ոչ միայն մանր տրամաչափի զինատեսակներից, այլեւ գործի դնելով խոշոր տրամաչափի զինատեսակներ, հրետանային միջոցներ եւ հարվածային անօդաչու թռչող սարքեր: Երբեմն էսկալացիայի ծավալները կտրուկ աճ են գրանցում՝ վերածվելով բացահայտ ռազմական ագրեսիայի: Հաճախ այդ խախտումները ուղեկցվում են Արցախի խաղաղ բնակավայրերի թիրախավորմամբ՝ ոտնձգելով բնակիչների կյանքի, հոգեկան եւ ֆիզիկական առողջության իրավունքի դեմ: 2022թ. օգոստոսյան սրացումը Ադրբեջանի կողմից ագրեսիայի մի նոր դրսեւորում է, որի վերաբերյալ մանրամասները ներկայացված են սույն զեկույցի առաջին բաժնում: 2022թ. օգոստոսի 2-ին ԱՀ նախագահը Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում հայտարարեց, որ Ադրբեջանը ռուսական խաղաղապահ զորակազմին ներկայացրած նամակով հայտնել է, որ իրենք նախատեսում են կատարել միջանցքով անցնող երթուղու փոփոխություն: Ադրբեջանի այս ապօրինի պահանջի, պահանջի կատարումն ապահովելուն ուղղված սկզբունքայնորեն ապօրինի քայլերի եւ Լաչինի միջանցքի կենսական նշանակությանը վերաբերվող մանրամասները ներկայացված են սույն զեկույցի երկրորդ բաժնում: 2020թ. նոյեմբերի 9-ի Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի ղեկավարների եռակողմ հայտարարությամբ հստակ ամրագրվում է Արցախի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետությանը կապող (Լաչինի) միջանցքի գործողությունը: Սույն միջանցքը գոյաբանական նշանակություն ունի Արցախի ժողովրդի համար, ուստիեւ գործողության խափանումը անխուսափելիորեն կհանգեցնի հումանիտար ճգնաժամի: 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ԱՀ Քաշաթաղի շրջանի բոլոր հայկական բնակավայրերը, բացառությամբ Բերձոր, Աղավնո, Ներքին Սուս եւ Քարեգահ համայնքների, անցան ադրբեջանական վերահսկողության տակ: Լաչինի միջանցքի երթուղու փոփոխության հետեւանքով նշված համայնքները եւս հայտնվել են ադրբեջանական վերահսկողության տակ: Աչքի տակ ունենալով անցյալի փորձը՝ նշված բնակավայրերի բնակիչները ստիպված են լքել իրենց տները՝ խուսափելու համար կոտորածից, խոշտանգումներից ու անմարդկային վերաբերմունքից: Շատերը տեղափոխում են իրենց ընտանեկան գերեզմանները ոչնչացումից ու պղծումից փրկելու համար: Ադրբեջանական վանդալիզմից փրկելու համար Արցախի իշխանությունները տարհանում են նաեւ մշակութային արժեքները: Ադրբեջանի կողմից ուժի կիրառման սպառնալիքի ներքո Բերձոր, Աղավնո եւ Սուս քաղաքացիական բնակավայրերի հայաթափման վերաբերյալ մանրամասն շարադրված է սույն զեկույցի երրորդ բաժնում: Ադրբեջանում հայերի նկատմամբ ատելության խոսքի եւ հայատյացության այլ դրսեւորումների ահռելի ծավալների առկայությունը ամենեւին էլ նորություն չէ, սակայն երբեմն դրանք կտրուկ աճում են՝ պայմանավորված տարբեր միջադեպերով: Օգոստոսյան սրացումը եւս բացառություն չէ, քանզի դրա հենց առաջին օրերից ադրբեջանական մեդիան ողողված է պետական պաշտոնյաների կողմից հնչեցվող ատելության խոսքով եւ մասնավոր անհատների կողմից հայատյաց տեսանյութերի եւ լուսանկարների հրապարակումներով: Ասվածի որոշ վկայություններ տեղ են գտել սույն զեկույցի չորրորդ բաժնում: Խաղաղապահ առաքելությունները գործող աշխարհակարգի բաղկացուցիչ մաս են կազմում: Տարածված պրակտիկա է խաղաղապահներին օժտել այնպիսի մանդատով, որը հստակեցնում է առաքելության սկզբունքները եւ գործառույթները: 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության հիման վրա Արցախում տեղակայված ռուսական խաղաղապահ զորակազմի համար, սակայն, նոյեմբերի 9-ի հայտարարությունից զատ, իր գործառույթները հստակեցնող այլ իրավական մանդատ սահմանված չէ, ինչը երբեմն մասնակիորեն խաթարում է խաղաղապահ առաքելության էությունը՝ վտանգի տակ դնելով Արցախի ժողովրդի իրավունքները: Այդ մասին առավել մանրամասն շարադրված է սույն զեկույցի հինգերորդ բաժնում: Զեկույցը պատրաստվել է՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից կատարված ուսումնասիրությունների, տարբեր համայնքներ, քաղաքացիական բնակավայրեր կատարած այցերի, քաղաքացիների հետ ունեցած առանձնազրույցների, պետական լիազոր մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա, եւ նպատակ է հետապնդում փաստագրելու Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի իրավունքների խախտման դեպքերն ու դրանց տարաբնույթ դրսեւորումները եւ միջազգային կառույցների ու իրավապաշտպան կազմակերպությունների ուշադրությունը հրավիրելու Արցախում ստեղծված իրավիճակին:

ԳՆԵՐԻ ԹԵՐՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԴԵՊՔ

Պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի շրջանակներում բացահայտել է ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տեղափոխվող ապրանքների գների բազմակի անգամ պակաս թերհայտարարագրման դեպք:

Մասնավորապես, օրերս ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչություն օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ հայր եւ որդի Մարգարյանների կողմից նախատեսվում է «Մեդեկս գրուպ» ՍՊԸ-ի միջոցով ԵԱՏՄ անդամ պետությունից Հայաստանի տարածք ներմուծել 2 բեռնատար բժշկական ձեռնոցներ եւ դիմակներ՝ շուկայականից մի քանի անգամ ցածր գնով:

Ստացված օպերատիվ տվյալներն իրացնելու նպատակով մշակվել եւ ձեռնարկվել են բազմակողմանի, մեծածավալ եւ արդյունավետ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում վարչության աշխատակիցների օպերատիվ հսկողության ներքո տվյալ բեռնատարները մուտք են գործել Բագրատաշենի սահմանային անցակետ եւ ուղեկցվել մաքսային պահեստ: Ապրանքների փաստացի հետազոտման արդյունքում պարզվել է, որ ներմուծված ապրանքների իրական արժեքը կազմում է շուրջ 460 հազար ԱՄՆ դոլար, մինչդեռ ընկերության կողմից, ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելով ներմուծման փաստաթղթերում, հայտարարագրվել է շուրջ 87 հազար ԱՄՆ դոլար:

Ձեռք բերված նյութերը, այդ թվում՝ նշված նախնական հաշվարկը, ուղարկվել են Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչություն, որտեղ առերեւույթ հանցագործության դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով:

Նախաքննություն իրականացնող քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան, որի որոշմամբ բեռնատարները խուզարկվել են, իսկ ներմուծված ապրանքները՝ ամբողջությամբ առգրավվել:

Կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների կողմից կատարված նախնական հաշվարկի համաձայն՝ ընկերության կողմից պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի վնաս:

Պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչությունը հորդորում է տնտեսվարող սուբյեկտներին ԵԱՏՄ անդամ հանդիսացող պետություններից ՀՀ տարածք տեղափոխվող ապրանքների ձեռք բերման փաստաթղթերում (հնվոյսներում) ապրանքների ձեռք բերման գները նշել իրականությանը համապատասխան հետագա հարկային հսկողությունից եւ ավելի խիստ վարչարարությունից խուսափելու համար, ինչպես նաեւ առաջնորդվել օրենքի գերակայության սկզբունքով եւ պահպանել հարկային օրենսդրության պահանջները:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 21-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«Կոնվերս» բանկը վերանայել է Converse Blitz վարկատեսակի պայմանները՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորման առավելագույն չեմ սահմանելով 50 մլն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը՝ ԱՄՆ դոլար, եվրո:

Վարկավորման առավելագույն ժամկետը 60 ամիս է:

Վարկավորման կարող են դիմել տնտեսության տարբեր ոլորտներում գործող փոքր եւ միջին ձեռնարկությունները, եթե պետական գրանցում են ստացել առնվազն երեք ամիս առաջ:

Ֆինանսավորում տրամադրվում է շրջանառու միջոցների համալրման, հիմնական միջոցների ձեռքբերման եւ կրեդիտորական պարտքի մարման նպատակով, առանց ֆինանսական վերլուծության իրականացման, ինչի շնորհիվ նվազում է վարկավորման համար պահանջվող ժամանակահատվածը:

Հայտի ուսումնասիրման վճար եւս նախատեսված չէ:

Այլ մանրամասների համար զանգահարել 011-511-211 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ԿԲ կողմից:

ՄԵՐԺՎԵՑ

Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը պարզաբանում է տարածել Բերձորում եւ Աղավնոյում բնակիչների կողմից իրենց տների հրկիզման դեպքերի վերաբերյալ: «Հաշվի առնելով, որ վերջին ժամանակներս հանրային լայն հնչեղություն է ստացել Բերձոր քաղաքում եւ Աղավնո համայնքում բնակիչների կողմից իրենց տների հրկիզման դեպքերը, Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունն իրազեկում է, որ սույն թվականի օգոստոսի 14-24-ն ընկած ժամանակահատվածում արձանագրված 13 տների հրկիզման դեպքերով նախապատրաստված բոլոր նյութերով քրեական գործերի հարուցումը մերժվել է արդարացման հիմքերով՝ հրկիզողների արարքներում հանցակազմի բացակայության կապակցությամբ: Վերջիններիս նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվում»,- ասված է ոստիկանության հաղորդագրության մեջ:

ՕՏԱՐԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով պարզվել են Արարատի մարզի Սուրենավան համայնքի նախկին ղեկավարի կողմից պաշտոնական լիազորությունների անցմամբ եւ պաշտոնեական կեղծիքի միջոցով նույն համայնքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն ապօրինի օտարելու դեպքի բոլոր հանգամանքները: Փաստական տվյալների համաձայն՝ Սուրենավան համայնքի նախկին ղեկավարը, 2017-2021 թթ. զբաղեցնելով նշված պաշտոնը, ընդհանուր 39.2 հա մակերեսով հողատարածքներն օտարելու նպատակով շրջանցել է օրենքով եւ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ընթացակարգերը: Մասնավորապես, վերջինս, ակնհայտորեն դուրս գալով իր լիազորությունների սահմաններից, չունենալով համայնքի ավագանու որոշումը եւ լիազոր մարմնի համաձայնությունը, որոշումներ է կայացրել նշված հողատարածքներն աճուրդով վաճառելու մասին:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՃԱՊՈՆԻԱ ՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՐ

Օգոստոսի 29-ին փոխվել են COVID-19-ով պայմանավորված ՀՀ քաղաքացիների՝ Ճապոնիա մուտքի եւ ելքի սահմանափակումների մասին կանոնները: Սահմանը հատելու ռեժիմը. ս.թ. հունիսի 10-ից Ճապոնիան բաց է կարճաժամկետ զբոսաշրջային նպատակներով երկիր ժամանելու ցանկություն ունեցող քաղաքացիների համար: Մուտքի սահմանափակումները մեղմացվել են, եւ ինքնամեկուսացման, ինչպես նաեւ օդանավակայանում պարտադիր ՊՇՌ-թեստավորման պահանջները բոլոր քաղաքացիների համար պայմանավորված են մեկնման երկրում (երկիրը, որտեղ քաղաքացին անցկացրել է վերջին 14 օրերը) առկա համաճարակային իրավիճակով: Մասնավորապես, առանձնացվել են 3 խմբերի երկրներ (ըստ համաճարակային իրավիճակի)՝ «Կարմիր», «Դեղին» եւ «Կապույտ» կատեգորիաների:

«Կարմիր» գոտուց ժամանելու դեպքում պատվաստման հավաստագրի բացակայության պարագայում Ճապոնիա մուտք գործելիս օդանավակայանում կկիրառվի պարտադիր ՊՇՌ թեստավորում, ապա քաղաքացին 3 օրով կմեկուսացվի կառավարության կողմից հատկացված կացարաններից մեկում: 3-օրյա ինքնամեկուսացումից հետո նոր թեստավորում (քաղաքացու հաշվին) կանցկացվի, եւ բացասական արդյունքի պարագայում քաղաքացին կարող է դուրս գալ ինքնամեկուսացումից եւ մուտք գործել Ճապոնիա: Պատվաստման հավաստագիր ունենալու դեպքում քաղաքացին կարող է 3-օրյա ինքնամեկուսացումն անցնել իր տանը/հյուրանոցում եւ բացասական արդյունքով թեստ հանձնելուց հետո կարող է դուրս գալ ինքնամեկուսացումից: Կամ հնարավոր է ընտրել 5-օրով ինքնամեկուսանալու տարբերակը, առանց որեւէ թեստ հանձնելու պարտավորության:

«Դեղին» գոտուց ժամանելու դեպքում պատվաստման հավաստագրի բացակայության պարագայում Ճապոնիա մուտք գործելիս օդանավակայանում ՊՇՌ թեստավորում կկիրառվի, ապա քաղաքացին 3-օրյա ինքնամեկուսացում կանցնի իր տանը/հյուրանոցում եւ բացասական արդյունքով թեստ (քաղաքացու հաշվին) հանձնելուց հետո կարող է դուրս գալ ինքնամեկուսացումից: Կամ հնարավոր է ընտրել 5-օրով ինքնամեկուսանալու տարբերակը, առանց որեւէ թեստ հանձնելու պարտավորության: Պատվաստման հավաստագիր ունենալու դեպքում քաղաքացին կարող է մուտք գործել Ճապոնիա առանց տեղում պարտադիր ՊՇՌ թեստավորման եւ ինքնամեկուսացման:

«Կապույտ» գոտուց ժամանելու դեպքում, անկախ պատվաստված լինելու հանգամանքից, Ճապոնիա մուտք գործելիս օդանավակայանում ՊՇՌ թեստավորում չի կիրառվի, չի գործի նաեւ ինքնամեկուսացման պահանջը. քաղաքացին կարող է Ճապոնիա ժամանելուն պես մուտք գործել երկիր, առանց սահմանափակումների:

Նշենք, որ Հայաստանն ընդգրկված է «Կապույտ» գոտու մեջ:

Ս.թ. սեպտեմբերի 7-ից սկսած՝ Ճապոնիա մուտք գործող բոլոր քաղաքացիները, որոնք ժամանում են այն երկրներից (կամ գտնվել են այդ երկրներում վերջին 14 օրերի ընթացքում), որտեղ գերակայում է Օմիկրոն շտամը (B.1.1.529) եւ ունեն պատվաստման) 3 դեղաչափի (JCOVDEN եւ Janssen պատվաստանյութի դեպքում 2 դեղաչափը բավարար է) վավեր հավաստագիր, կարող են մուտք գործել Ճապոնիա, առանց նախկինում պարտադիր ՊՇՌ թեստի բացասական արդյունքով հավաստագիր ներկայացնելու նախապայմանի: Հավաստագրերը պետք է տրված լինեն կամ Ճապոնիայում, կամ բավարարեն հետեւյալ պայմանները՝

1. փաստաթուղթը պետք է լինի անգլերեն լեզվով,
2. պարունակի տեղեկատվություն անվան, ծննդյան ամսաթվի, պատվաստանյութի անվանման, պատվաստման ամսաթվի եւ դեղաչափերի քանակի մասին,
3. եթե հավաստագիրը ճապոներեն կամ անգլերեն լեզուներով չէ, ապա պետք է ներկայացվի անգլերեն կամ ճապոներեն թարգմանություն:

Հարկ է նշել, որ բոլոր կատեգորիաների դեպքում պարտադիր պայման է, որ զբոսաշրջային այցն իրականացվի խմբերով եւ ճապոնական կազմակերպության (որպես receiving organization) ներգրավմամբ: Ուստի Ճապոնիա մուտք գործելու համար անհրաժեշտ է դիմել մուտքի արտոնագիր ստանալու համար, ինչն իր հերթին հնարավոր է, եթե ընդունող կազմակերպությունը (համալսարան, գործատու, զբոսաշրջային ընկերություն եւ այլն) դիմի Entrants, Returnees Follow-up System (ERFS) առցանց համակարգ եւ մուտքագրված դիմումը հաստատվի Ճապոնիայի առողջապահության, աշխատանքի եւ բարեկեցության նախարարության կողմից: Վերոնշյալ պայմանները վերաբերում են թե՛ նոր մուտք գործող քաղաքացիներին (new entry), թե՛ Ճապոնիա վերադարձող քաղաքացիներին (re-entry):

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բրոսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (զնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (զնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Լոռու մարզ, համայնք Ալավերդի քս., Բաղրամյան թաղամաս, 5/37 հասցեում գտնվող 41,8 քմ. տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 8400000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի քս., Հ. Մազմանյան փողոց, 115ա շենք, 14 հասցեում գտնվող 79,59 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18100000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Ն. Մառի փողոց, 6 շենք, 44 հասցեում գտնվող 74,1 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 25200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Ավան, Դուրյան թաղամաս, 56 շենք, 20 հասցեում գտնվող 70,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 29200000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան քս., Տեր Տաճատի փողոց, 4 հասցեում գտնվող 124,05 քմ. բնակելի տուն, 43,87 քմ. անասնաշենք եւ 0,1762 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16560000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան քս., Պ.Սեւակի փողոց, 2 հասցեում գտնվող 111,23 քմ. բնակելի տուն եւ 0,124 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 13100000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արարատ քս., Աբովյան փողոց, 6 շենք, 21 հասցեում գտնվող 67,6 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9070000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Արթիկ քս., Դուրյան փողոց, 49 հասցեում գտնվող 157,35 քմ. բնակելի տուն, 38,38 քմ. անասնաշենք, 24,69 քմ. /50,62 խ.մ./ պարիսպ եւ 0,06 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 13770000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Արթիկ քս., Լաբատ-2 թաղամաս, 28 շենք, 10 հասցեում գտնվող 81,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7600000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր քս., Հ.Ավետիսյան փողոց, 141 հասցեում գտնվող 206,4 քմ. բնակելի տուն, 15,4 քմ. ծածկ եւ 0,0539 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 22900000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր քս., Բաղրամյան Ա թաղամաս, 228 հասցեում գտնվող 174,2 քմ. բնակելի տուն, 4,2 քմ. կաթսայատուն, 4,2 քմ. չուլան եւ 0,0391 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 13500000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր քս., Գործարանային փողոց, 1 շենք, 33 հասցեում գտնվող 86,2 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12900000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ քս., Մյասնիկյան փողոց, 34/1 հասցեում գտնվող 373,79 քմ. բնակելի տուն, 21,39 քմ. օժանդակ շինություն, 29,76 քմ. օժանդակ շինություն, 6,4 քմ. /12,8 խ.մ./ պարիսպ եւ 0,0724 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25760000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ քս., Ծ. Իսակովի փողոց, 103 շենք, 16 հասցեում գտնվող 47,1 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9800000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի քս., Լենինգրադյան փողոց, 1 շենք, 31 հասցեում գտնվող 89,08 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18100000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս քս., Մ. Խորենացու փողոց, 84 հասցեում գտնվող 157.3 քմ. բնակելի տուն եւ 0.0855 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 9500000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս քս., Յ. Բախշյան փողոց, 5 հասցեում գտնվող 222.5 քմ. բնակելի տուն եւ 0.0417 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17420000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս քս., Մ. Խորենացու փողոց, 33 հասցեում գտնվող 229,9 քմ. բնակելի տուն եւ 0,1011 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 19070000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս քս., Սյունիքի փողոց, 153 հասցեում գտնվող 234,4 քմ. բնակելի տուն եւ 0,094 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 19270000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս քս., Օրբելյանների փողոց, 2 շենք, 4 հասցեում գտնվող 85.2 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16540000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն, Դավթաշեն 2-րդ փողոց, 42 հասցեում գտնվող 101,14 քմ. բնակելի տուն, 17,3 քմ. օժանդակ շինություն, 1 քմ. /1,9 խ.մ., 4,82 գծամետր/ պարիսպ եւ 0,01575 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Ավան, Ավան-Առինջ, 2-րդ միկրոշրջան, 2/7 շենք, 10 հասցեում գտնվող 75.45 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 29500000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի քս., Օդանավակայան 3 թաղամաս, 41/3 հասցեում գտնվող 203,22 քմ. բնակելի տուն, 31,55 քմ. ավտոտնակ, 3,64 քմ. մառան, 1,46 քմ. զուգարան, 7,65 քմ. /15,3 խ.մ./ պարիսպ եւ 0,110499 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21700000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան քս., Կոտայքի փողոց, 59 հասցեում գտնվող 192,6 քմ. բնակելի տուն, 39,1 քմ. ավտոտնակ, 9 քմ. սան հանգույց, 33,8 քմ. տնտեսական շինություն, 19,6 քմ. գոմ, 19,3 քմ. հավաբուն, 4,2 քմ. հավաբուն, 4,1 քմ. կաթսայատուն եւ 0,095 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33500000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան քս., միկրոշրջան թաղամաս, 302 շենք, 50 հասցեում գտնվող 80,94 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11300000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Իջեւան, Իջեւան քս., Ե. Չարենցի փողոց, 40 հասցեում գտնվող 382,9 քմ. բնակելի տուն եւ 0,1 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25430000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր քս., Գրիբոյեդովի փողոց, 8 շենք, 5 հասցեում գտնվող 63,71 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 4800000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր քս., Ներսիսյան փողոց, 5 շենք, 48 հասցեում գտնվող 71,3 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Քրիստափորի /Գորկի/ փողոց, 86 հասցեում գտնվող 155,5 քմ. բնակելի տուն, 71,4 քմ. օժանդակ շինություն եւ 0,02836 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 80700000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Բալահովիտ, Մ. Թումանյան փողոց, 5 հասցեում գտնվող 197,2 քմ. բնակելի տուն եւ 0,0336 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Ն.Դումանի փողոց, 19 հասցեում գտնվող 275,2 քմ. բնակելի տուն, 19,9 քմ. ավտոտնակ եւ 0,04218 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 86900000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Առինջ, Հ. Գասպարյան փողոց, 9 հասցեում գտնվող 219,7 քմ. բնակելի տուն եւ 0,04379 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 45900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Շահուման 9 փողոց, 3 շենք, 58 հասցեում գտնվող 43 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Յ. Լեփսիուսի փողոց, 17 շենք, 20 հասցեում գտնվող 30,8 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ա. Բաբաջանյան փողոց, 129 շենք, 60 հասցեում գտնվող 72,8 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Մ. Մազմանյան փողոց, 14 շենք, 1 հասցեում գտնվող 59,6 քմ բնակարան եւ 13,4 քմ. ինքնակամ կառուցված շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 22600000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Մեղրի, Մեղրի քս., Փարամազի փողոց, 17 շենք, 8 հասցեում գտնվող 65,1 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8100000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ն. Շենգավիթ, 6-րդ փողոց, 5/2 հասցեում գտնվող 161,1 քմ բնակելի տուն, 1,62 քմ. օժանդակ շինություն, 22,43 քմ. օժանդակ շինություն, 1,8 քմ. /4,5 խ.մ./ պարիսպ եւ 0,094121 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 37400000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Էրեբունի, Էրեբունու փողոց, 34 շենք, 51 հասցեում գտնվող 78,4 ք?մ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 30100000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Սիսիան, Սիսիան քս., Խանջյան փողոց, 34 հասցեում գտնվող 117,1 քմ. բնակելի տուն, 17,5 քմ. անասնաշենք եւ 0,063 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 11600000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ քս., Փյունիկ թաղամաս, 17 հասցեում գտնվող 80 քմ. բնակելի տուն եւ 0.063 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 8200000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ քս., Քզրը Քզրքորյան փողոց, 259 հասցեում գտնվող 157.3 քմ. բնակելի տուն եւ 0.138 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 13500000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան քս., Քալաշյան փողոց 28 հասցեում գտնվող 153,6 քմ. բնակելի տուն, 33,66 քմ. ավտոտնակ, 9,12 քմ. բաղնիք, 1,8 քմ. /1,3 խ.մ./ պարիսպ եւ 0.045 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12500000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան քս., Սունդուկյան փողոց, 7 հասցեում գտնվող 87,8 քմ. բնակելի տուն, 13,61 քմ. գոմ, 15,4 քմ. ավտոտնակ, 7 քմ. բաղնիք, 2,2 քմ. /0,9 խ.մ./ պարիսպ եւ 0.0387 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 7800000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան քս., Չայկովսկու փողոց, 17 հասցեում գտնվող 215.09 քմ. բնակելի տուն, 29.93 քմ. անասնաշենք, 9.88 քմ. ամառային խոհանոց, 1.72 քմ. /1.56 խ.մ./ պարիսպ 5.74 քմ. /2.88 խ.մ./ պարիսպ, 0.33 քմ. /0.36 խ.մ./ պարիսպ եւ 0.0408 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17200000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան քս., Խանջյան փողոց, 19 հասցեում գտնվող 199,8 քմ. բնակելի տուն, 31,9 քմ. անասնաշենք եւ 0.0615 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 13200000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ քս., Մ. Մաշտոցի փողոց, 77 շենք, 5 հասցեում գտնվող 77,2 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19000000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք?, Զվարթնոց թաղամաս, Շուլոխովի փողոց, 11 հասցեում գտնվող 177,3 քմ. բնակելի տուն, 5,2 քմ. սանհանգույց, 7,2 քմ. թռչնանոց եւ 0,0658 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16800000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր քս., Վարդանանց փողոց, 122 շենք, 86 հասցեում գտնվող 65,33 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15300000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր քս., Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 10 շենք, 36 հասցեում գտնվող 61,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8600000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր քս., Վ. Համբարձումյան փողոց, 9ա շենք, 42 հասցեում գտնվող 43.24 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 3800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Ավան, Ավան-Առինջ թաղամաս, 1-ին միկրոշրջան, 2/12 շենք, 28 հասցեում գտնվող 79,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 34070000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 19.09.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 10.10.2022թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում/աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՇՈՈՒ-ԲԻԶՆԵՍ

ՀԱՅՏՆԻՆԵՐԻՑ ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՄԱՅՐԱՑԵԼ 2022Թ.-ԻՆ

Ամփոփելով տարին՝ ArmLur.am-ը ներկայացնում է այն հայ հայտնիներին, որոնց ընտանիքում 2022 թվականին համալրում է եղել: 2022-ը նոր զգացումներ ու հույզեր է պարգևել Սիրուշոյին, Արամ mp3-ին, Տիրուհի Հակոբյանին եւ Լենա Ղազարյանին:

Երգչուհի Սիրուշոն, որն օրերս է վերադարձել Ամերիկայի Միացյալ Նահանգներից, որտեղ մեկնել էր երրորդ զավակին՝Զաբելին լույս աշխարհ բերելու նպատակով, պարբերաբար իր հետեւորդների հետ կիսվում է նրա լուսանկարներով:

Նշենք, որ երգչուհին Ամերիկայի Միացյալ Նահանգներ էր մեկնել դստերը լույս աշխարհ բերելու նպատակով, իսկ մինչ այդ երգչուհու անվան շուրջ քննադատություններն եւ քննարկումները չէին դադարում:

«Սա մեկ ամիս առաջ էր՝ Զաբելի 40-րդ օրն էր, ու այն մեզ համար շատ խորհրդանշական էր…

Արարողությունն իր աղոթքով օրհնեց Արցախի թեմի երկար տարիների առաջնորդ, Արցախի հերոս, հաղթանակի խորհրդանիշ Պարգեւ սրբազանը…»,-գրել է նա:

Օրերս լույս աշխարհ է եկել նաեւ դերասան, երգիչ Արամ շp3-ի դուստրը, ում նա անվանակոչել է Շողեր: Նշենք, որ երգիչն ունի երկու զավակ, մեկ դուստր:

«Սիրտս կրակով լցվեց, Շողե՛ր ջան»,-այսպես էր գրել նա դստեր լույս աշխարհ գալու առթիվ:

Այս տարվա մայիսի 21-ին լույս աշխարհ է եկել երիտասարդ դերասանուհի Տիրուհի Հակոբյանի առաջնեկը: Զույգը երեխային անվանել է Դանիելլա:

Ավելի վաղ մեզ հետ զրույցում դերասանուհին, անդրադառնալով դստերը, ասել էր. «Հիմա օրս նվիրված է իմ փոքրիկ՝երկու ամսական եւ 11 օրական Դանիելլային: Իրականում կդժվարանամ ասել, թե ինչպես եմ օրս սկսում, քանի որ հիմա ամառ է, իսկ ամռանը անկանխատեսելի է, ամեն օրը տարբեր է մյուսից, դրա համար չեմ կարող ստույգ ասել, միայն ավարտելը կարող եմ ասել հստակ, որ ավարվում է Դանիելլային քնեցնելով»,- ժպիտով նշում է դերասանուհին:

Ամերիկաբնակ երգչուհի Լենա Ղազարյանն այս տարի նույնպես մայրացել է: Երգչուհին դուստր է ունեցել: «Շնորհակալ եմ, Տե՛ր. 01.07.22, Նելլի Նշանի Փամբուկյան: Մայրը ամենանվիրական բանն է ամբողջ աշխարհում: Լինել մայր նշանակում է ներել ու զոհաբերել ինքդ քեզ: Մայր դառնալով՝ կինը իրեն հավերժ զրկում է թույլ լինելու իրավունքից»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԳՆԱԼՈՒ ԵԿԱ»

ԿԱՅԱՑԱՎ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ-ԳԻՆԵՁՈՆԸ

ԱՐՏ PR ընկերության նախաձեռնությամբ եւ Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի աջակցությամբ օգոստոսի 30-ին Շիրակի մարզային գրադարանում տեղի ունեցավ Հրաչ Հառիճեցու (Դավթյան) «Գնալու եկա» բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդես-գինեձոնը:

Շնորհանդես-գինեձոնին ներկա էին գրողի հարազատները, գրչակից ընկերներն ու ընթերցողները: Ծանոթներն ու գրչակից ընկերները հիշողություններ ներկայացրին Հառիճեցու մասին՝ ընթերցելով պատառիկներ նրա ժողովածուից:

Մանուկ հասակում որբանալով՝ Հրաչ Հառիճեցին բավական ծանր մանկություն է ունեցել, իսկ այդ օրերն ու ապրումները հայելանման պատկերով արտացոլված են գրողի ստեղծագործություններում:

«Հայրս մահացավ 82 տարեկան հասակում, գրել սկսել է կյանքի վերջին տարիներին ու բավական բեղմնավոր է եղել գրիչը. 10 տարիների ընթացքում 4 գիրք է հրատարակել, որից 2-ը բանաստեղծությունների ժողովածուներ են»,- «Արմենպրես»-ին նշեց բանաստեղծի դուստրը՝ Վարդուհի Դավթյանը՝ շնորհակալություն հայտնելով ԱՐՏ PR ընկերության հիմնադիր-տնօրեն Գայանե Դավթյանին եւ Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքին հոր վերջին փափագը՝ գրքի շնորհանդեսը կյանքի կոչելու համար:

«Գնալու եկա» ժողովածուն Հրաչ Հառիճեցու բանաստեղծությունների երկրորդ գիրքն է , որտեղ նա ամփոփել է իր ապրած կյանքի պատկերները եւ ապրումները:

ԼՈՒՐԵՐ

ԿԿԱՅԱՆԱ ՀԱՄԱՏԵՂ ԵԼՈՒՅԹ

Սերժ Թանկյանը նշել է, որ անհամբեր սպասում է իր եւ Բրայան Մեյի՝ Երեւանում կայանալիք համատեղ ելույթին: Սեպտեմբերի սկզբին Queen լեգենդար խմբի կիթառահարը կժամանի Հայաստան՝ StarmusVI փառատոնի շրջանակներում: Մեյն ու Թանկյանը կկատարեն Queen-ի The Show Must Go On երգը:

Նշենք, որ սեպտեմբերի 7-ին Մեյը հանդես կգա Another world համերգային ծրագրով, որին կմասնակցեն Գրեհամ Գոլդմանը, Դերեկ Շերինյանն ու Sons of Apollo խմբի մասնակիցները, Մոնսերատ Մարտին, Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը:

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ՝ 5–ՐԴ ՏՈՒՐՈՒՄ

Լոնդոնի «Չելսիի» գերմանացի գլխավոր մարզիչ Թոմաս Տուխելը մեկնաբանել է «Սաութհեմփթոնից» կրած 1:2 հաշվով պարտությունը Անգլիայի առաջնության 5-րդ տուրի խաղում: «Գրեթե բոլոր հանդիպումները մենք լավ ենք սկսում, բայց հետո կենտրոնացվածության եւ գործողությունների հետեւողականության խնդիր ենք ունենում: Մենք ձգտել ենք լուծումներ գտնել: Ես ատում եմ պարտվել, եւ այս մրցաշրջանում մենք դարձյալ պարտվեցինք:

Կարծում եմ՝ շատ բան պետք չէ մրցակիցներին մեզ հաղթելու համար: Մենք ձգտում ենք հաղթանակի, բայց պետք է շատ արագ հասկանալ, թե որն է մեր խնդիրը: Նաեւ չեմ հասկանում, թե ինչու այսքան շատ ֆուտբոլիստներ վնասվածքներ ունեն»,- Տուխելի խոսքը մեջբերում է ESPN-ը: «Չելսին» Անգլիայի ընթացիկ առաջնությունում պարտվել էր նաեւ «Լիդս Յունայթեդին»՝ 0:3: Լոնդոնյան թիմը 7 միավորով 8-րդն է:

ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Փոփի արքա Մայքլ Ջեքսոնը կախվածություն առաջացնող թմրանյութեր գնելու համար ինքնությունը կեղծող 19 փաստաթուղթ է օգտագործել՝ հղում տալով TMZ Investigates. Who Really Killed Michael Jackson նոր վավերագրական ֆիլմին: «Մայքլը մեծապես պատասխանատու է իր մահվան համար, սակայն բժշկական համայնքը, անշուշտ, մեծ օգնություն է ցուցաբերել նրան», - ասվում է Ջեքսոնի պլաստիկ վիրաբույժ Հարի Գլասմանի տարածած հայտարարության մեջ:

Ֆիլմում նշվում է, որ, հակառակ նրան, որ Մայքլ Ջեքսոնի մահվան համար մեղադրվում էր բժիշկ Ջեքսոն Կոնրադ Մյուրեյին, որը պարբերաբար նրան պրոպոֆոլ էր տալիս, ամեն ինչ շատ ավելի բարդ էր:«Բժիշկ Մյուրեյը Ջեքսոնի անկողնու մոտ էր», - ասել է Լոս Անջելեսի ոստիկանության հետախույզ Օռլանդո Մարտինեսը եւ հավելել, որ Ջեքսոնը երկար տարիներ գիտակցված դեպի մահն է գնացել, այդ թվում՝ բժիշկների թողտվության պատճառով, որոնց նա դիմել էր:

● *Սեպտեմբերի 4-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ինչ տարբերություն, թե ում հետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Թիվ 1 ցուցակով ովքե՞ր ունեն արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք:

Խորեն Դանիելյան (57 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Թիվ 1 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է 55 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, առնվազն 15 օրացուցային տարին աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում (թիվ 1 ցուցակ), մինչեւ 2014 թվականի հունվարի 1-ը առնվազն 7 օրացուցային տարի 6 օրացուցային ամիսն աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում եւ այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Թիվ 2 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է 59 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, առնվազն 20 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում (թիվ 2 ցուցակ), մինչեւ 2014 թվականի հունվարի 1-ը առնվազն 10 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում եւ այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է թույլատրվում փոփոխել աշխատանքի էական պայմանները:

Նվարդ Հայրապետյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքի վայրի, աշխատանքի վարձատրության չափի եւ (կամ) այն որոշելու ձեւի, արտոնությունների, աշխատաժամանակի (աշխատանքի եւ հանգստի) ռեժիմի, տարակարգերի եւ պաշտոնների անվանումների, աշխատանքային պայմանագրի տեսակի եւ (կամ) գործատուի փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Փոփոխելու դեպքում գործատուն պետք է գրավոր ծանուցի մինչեւ 1 տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, 1-5 տարի աշխատողին՝ 35 օր առաջ, 5-10 տարի աշխատողին՝ 42 օր առաջ, 10-15 տարի աշխատողին՝ 60 օր առաջ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ազատության պողոտայում՝ ժողովրդին հայտնի կամրջի տակ՝ թունելի սկզբնամասում, տեղի է ունեցել խոշոր ավտովթար. բախվել են Kia եւ 2 Opel մակնիշի ավտոմեքենաներ: Վթարի հետեւանքով, բարեբախտաբար, զոհեր չունենք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.08.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: